*Սարգիս ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԱՐԺԵՔԸ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

I. Բանահյուսությունը կամ բանավոր ավանդությունը ժանրային գեղարվեստական մտածողության մեծ ու ամբողջական համակարգ է՝ բաղադրված վիպական, քնարական, դրամատիկական սեռերին պատկանող տարբեր տեսակներից (ժանր) ու ենթատեսակներից: Այն հորինվում և կատարվում է բանավոր, ժողովրդական տարբեր բարբառներով ու ենթաբարբառներով, պատկերավոր խոսքի բոլոր ձևերով ու միջոցներով: Հորինվում է մեկ անհատի կամ անհատների խմբի կողմից, ընդունվում, յուրացվում, տարածվում է ավելի լայն հանրության կամ հասարակայնության մեջ և ըստ հասարակական մասնակիցների՝ ենթարկվում հանրային վերամշակման: Այդ կերպ բանահյուսական յուրաքանչյուր ստեղծագործություն, մեկ անգամ հորինվելով որոշակի տեղավայրում և ընդունվելով տվյալ հանրության կողմից, բանավոր ավանդման շնորհիվ՝ մեկ անհատից փոխանցվում է մեկ ուրիշի, հասարակական մեկ խմբից՝ մյուսին, մեկ տեղավայրից՝ մեկ այլ տեղավայր, մեկ երկրից ու ժողովրդից՝ մեկ այլ երկրի ու ժողովրդի, պատմական մեկ դարաշրջանից՝ մեկ այլ դարաշրջան և այդ անհատական հոգեբանական, սոցիալական, աշխարհագրական, էթնիկական և պատմական գործոնների ազդեցության տակ ենթարկվում համապատասխան փոփոխությունների: Դրանց հետևանքով առաջ են գալիս բանահյուսական միևնույն ստեղծագործության բազմաթիվ ազգային ու միջազգային տարբերակներ, վարկածներ (վերսիաներ) որոնք էլ հենց դառնում են բանահյուսական երկի բնագրերը: Բանահյուսական երկերը գոյություն ունեն միմիայն տարբերակների և վարկածների տեսքով: Բանահյուսությունն ուսումնասիրող գիտությունը՝ բանագիտությունը, իրավամբ կոչվում է տարբերակների հավաքման (բանահավաքչություն) և հետազոտման գիտություն:

Տարբերակներն սկզբնապես առաջանում են նախնական ստեղծագործության որոշ, համեմատաբար թույլ կապակցված տարրերի փոփոխություններով, դրանց կորուստներով, նորերի հավելմամբ կամ պարզապես նորացմամբ ու թարմացմամբ, իսկ ժամանակի ու տարածության համեմատաբար մեծ միավորների մեջ կատարվող փոփոխությունների ընթացքում ստեղծագործության առավել կայուն տարրերը ևս ենթարկվում են այլափոխման կամ կորուստների: Բոլոր դեպքերում՝ բանահյուսական երկի տարբերակները բաղադրվում են ավանդական կայուն, անփոփոխ (ինվարիանտային) և առավել դյուրափոփոխ, այլակերպվող տարրերից: Այդ զույգ տարրերի բաղադրությամբ է պայմանավորված բանահյուսական երկերի թե՛ խոր վաղեմությունն ու ավանդականությունը և թե՛ միաժամանակ նրա այլափոխված նորայնությունն ու կենսունակությունը:

Այս կերպ բանահյուսական երկն իր բոլոր տարբերակներով, անկախ ժանրային բնույթից, թե՛ ավանդական ինվարիանտի և թե՛ փոխակերպումների մակարդակով, իր մեջ է ներառնում և պահպանում սոցիալ-պատմական ու մշակութային տարաժամանակյա իրողություններ կամ դրանց առանձին հիշատակներ:

Բայց բանահյուսական երկերն ամենից առաջ գեղարվեստական մտածողության արգասիք են և գեղարվեստական խոսքի արտահայտություններ, որոնց մեջ, հետևաբար, իրականությունն արտացոլվում է բանավոր ավանդությամբ, գեղարվեստական պատկերների ու կերպարների միջոցով փոխակերպված, խորհրդանշված, ընդհանրացված և ենթարկված առասպելաբանաստեղծական մտածողության ավանդական կաղապարներին: Պատմական իրողություններն ու իրադարձությունները բանավոր ավանդության մեջ նորագույն դեպքերի ու դեմքերի ազդեցության տակ շարունակ ենթարկվում են նորացման, փոխակերպման, ընդհանրացման, բայց միշտ ենթակա ավանդական մտածողության արխետիպային կաղապարներին, որոնք գիտակցական և ենթագիտակցական մակարդակներով հավերժ կառչած են բանաստեղծական

**Իբրև զեկուցում ներկայացվել է «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական առաջին գիտաժողովի լիագումար նիստում, Գյումրի 1994թ.:*

մտածողությանն ու երևակայությանը: Բանահյուսության մեջ այդ կաղապարներով է վերաձևվում իրականությունը, դառնում բանաստեղծական որոշակի կառույց, որն արտահայտվում է ամբողջական ու ավարտուն բանահյուսական ընագրի տեսքով, լինի այն ընդարձակ վիպասանություն, հեքիաթ, զրույց, երգ, թե սեղմ ու հակիրճ բանաձև՝ հանելուկ, առած և այլն:

Բանահյուսական բնագրերը, թեպետ հարափոփոխ, այնուամենայնիվ հարաբերականորեն կայուն ու ամբողջական միավորներ են, որոնք գեղարվեստական սյուժեների, մոտիվների, կերպարների միջոցով, կենդանի ու պատկերավոր խոսքով վերարտադրում են տարբեր պատմաշրջանների էթնիկամշակութային շատ իրողություններ:

2. Ի տարբերություն գեղարվեստական գրականության, որի հիմնական նպատակը ընթերցող լայն խավերի գեղագիտական կարիքների բավարարումն է, բանահյուսությունը և, մասնավորապես նրա որոշ տեսակներ (հեքիաթ, ժող. վեպ, զրույց, երգ), նման նպատակներ հետապնդելով հանդերձ, ունի նաև կիրառական լայն գործառնություններ, սերտորեն առնչվում է ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի տարբեր ոլորտների հետ, ստանձնում է գործառնական ակտիվ դեր և գեղարվեստական խոսքով ու մտածողությամբ իր մեջ արտացոլում կյանքի ու մշակույթի այդ տարբեր բնագավառներին առնչվող ժողովրդական ըմբռնումները, մտորումները, հավատալիքներն ու պատկերացումները, իղձերն ու ձգտումները:

ա/ Բանավոր ավանդության ամենավաղ կիրառական ֆունկցիան թերևս նրա ծիսահմայական գործառույթն է՝ կապված ամենից առաջ մարդկային խոսքի հմայական զորության հավատալիքի հետ: Դա, այսպես կոչված, խոսքային հմայությունն է (վերբալիս մագիա), որն արտահայտվում է հմայական հատուկ բանաձևերով (անեծք, օրհնանք, երդում, աղոթք, հրաման, սպառնալիք) և կիրառվում է տարբեր հմայագործական արարողություններում (բժշկություն, կախարդանք), իսկ ծիսական տարբեր երգերի ու բարեմաղթության բանաձևերի ծիսաթատերական բնագրերի զուգակցմամբ՝ ծիսատոնական տարբեր արարողություններում (ծնունդ, հարսանիք, մահ, հասարակական, կրոնական զանազան տոներ ու տոնախմբություններ):

բ/ Հաջորդ կիրառական ֆունկցիան, որ դարձյալ հենված է բանաձևված խոսքի հմայական ներգործության հավատալիքի վրա, բանահյուսական որոշակի ժանրերի (անեծք, օրհնանք, երդում) իրավաբանական գործառույթն է: Վաղ պատմական, միջնադարյան, նոր շրջանի գրավոր ու բանավոր վկայություններով՝ անեծքը և օրհնանքը, ինչպես նաև երդումը, իբրև պատժի և խրախուսանքի իրավաբանական սանկցիաներ, լայնորեն կիրառվել են նյութական հուշարձանների, մշակութային արժեքների պահպանության, խնամքի, անձեռնմխելիության, աշխարհիկ ու հոգևոր հանձնառությունների, պետական ու անհատական պայմանագրերի, առքի և վաճառքի գործարքների անկասելիությունը ապահովելու նպատակով:

գ/ Բանահյուսության գործառնական մյուս կարևոր կիրառությունը, որ հետապնդում է հոգեբանական-գեղագիտական, նաև գործնական նպատակներ, աշխատանքի տարբեր ոլորտների հետ նրա սերտ առնչումն է: Այն դրսևորվում է գերազանցապես աշխատանքային երգերով, որոնք ընախոսորեն կապված լինելով մարդու գործունեության աշխատանքային ռիթմին, աշխատանքով նյութական բարիքներ ապահովելու նրա հոգեկան ակնկալիքներին, պարտադիր ուղեկցում են աշխատանքի բոլոր ձևերին ու տեսակներին, հոգեբանորեն թեթևացնում դրանք և իրենց բովանդակությամբ արտահայտում մարդու վերաբերմունքը աշխատանքի միջոցների, ակնկալվող արդյունքների և իր հասարակական մեծահեհ նկատմամբ:

դ/ Ի վերջո, բանավոր ավանդության կիրառական հաջորդ բնագավառը լեզվական գործառնությունների ոլորտն է: Բանահյուսությունն առհասարակ լինելով գեղարվեստական մտածողության լեզվական դրսևորման երևույթ, նրա առանձին սեղմ ու հակիրճ տեսակները (առած-ասացվածքներ, ոճական կաղապարված դարձվածներ, հիշոց-հայհոյանքներ, սպառնալիքներ, փաղաքշական խոսքեր և այլն), ունենալով հանդերձ բանահյուսական նկարագիր ու ժանրային հատկանիշներ, իրենց սովորական կիրառությամբ անբաժան են կենդանի խոսակցական (նաև գրական) լեզվից և լայնորեն օգտագործվում են առօրյա

խոսքում, իբրև լեզվական պատկերավորման սովորական միջոցներ՝ խոսքը դարձնելով առավել կենդանի, սեղմ ու իմաստալից:

3. Բանավոր ավանդությունը խոսքի արվեստ լինելով հանդերձ, միաժամանակ սինկրետիկ-համադրական արվեստ է: Այն թե՛ իր ծագումնաբանությամբ և թե՛ հետագա պատմահիպաբանական զարգացման ընթացքում համադրվել ու համատեղվել է էթնիկական մշակույթի, մասնավորապես արվեստի տարբեր ձևերի հետ (վոկալ-երաժշտական, պարային, թատերական), կենցաղավարել և կատարվել է այդ ձևերի մասնակցությամբ:

Երգերն, օրինակ, հորինվել և կատարվել են սրսրաարդիր երաժշտական եղանակով (մեղեդի), ուղեկցվել երաժշտական որոշակի գործիքների նվագակցությամբ, հաճախ էլ՝ պարերով (արարերգային բանահյուսություն):

Պաշտամունքային առասպելները ծիսայնացվել, թատերայնացվել, ներկայացվել են կրոնածիսական արարողություններով, դրամատուրգիական որոշակի ձևերով, պարտադիր ուղեկցվել երգային մեղեդիներով, երաժշտությամբ, պարերով:

Վիպերն (էպոս) ու վիպերգերը՝ հորինված լինելով չափածո կամ չափածո ու արձակ մասերի համադրությամբ և՛ երգվել են, և՛ երգվել են ու վիպվել միաժամանակ, ուղեկցվել երաժշտական որևէ լարային գործիքի նվագակցությամբ, ինչպես նաև՝ պարային ռիթմիկ շարժումներով: դիմախաղերով, ձայնային համապատասխան ելևէջներով:

Բանահյուսական բոլոր այն ստեղծագործությունները առհասարակ, որոնք օժտված են ռիթմիկ տաղաչափությամբ, քնարական կամ դրամատուրգիական տարրերով կամ էլ էթնիկական մշակույթի տարբեր բնագավառներում ունեցել են ֆունկցիոնալ կիրառություն, միշտ էլ հանդես են եկել արվեստի տարբեր ձևերի համադրությամբ: Սինկրետիզմը բանավոր ավանդության տարրերն է:

4. Բանավոր ավանդությունը մարդկության սրսամության վաղ արշալույսից ի վեր, տարբեր ձևերով, լայն արտացոլումներ է գտել մշակութային տարբեր հուշարձաններում՝ սկսած քարանձավային պատկերագրությունից, ժայռապատկերներից, վերջացրած վաղ և դասական շրջանի մոնումենտալ քանդակագործությամբ, զարդարվեստով, գրի ու գրչության տարբեր ձևերով ավանդված գրավոր հուշարձաններով: Կերպարվեստի տարբեր ձևերում անդրադարձվել են հին առասպելաբանական մոտիվներ, ըմբռնումներ, սրսակերացումներ, կերպարներ, անգամ սյուժեներ կամ սյուժետային տարրեր: Դրանց շնորհիվ հնագույն կերպարվեստի (քանդակներ, քանդակազարդ պատկերներ, հնագիտական իրերի զարդանախշեր և այլն) շատ նմուշների իմաստաբանությունը, որ հաճախ մնում է ռտեղծվածային, հնարավոր է բացահայտել ու վերակազմել բանավոր ավանդության բտրքերում պահպանված, նաև հենց գրավոր ավանդված առասպելական գրույցների, երգերի, հավատալիքների, պատկերացումների միջոցով:

Իսկ հին գրավոր հուշարձաններով մեզ հասած ամբողջական սռատպելները, վեպերը, հեքիաթները, գրույցները, երգերը, որոնց զուգահեռ տարբերակները շարունակում են գոյատևել արդի բանավոր ավանդության մեջ, վկայում են բանահյուսության խոր փաղնջականությունն ու ավանդականությունը:

Իր այս բազմագործառույթ լայն կիրառությունների, հասարակական տարբեր խմբերի, նրանց նյութական և հոգևոր կյանքի, մշակույթի տարբեր բնագավառների հետ ունեցած սերտ առնչությունների, խոր ավանդականության, տարբեր դարաշրջաններում կրած նորայնացման և փոխաձևումների հետևանքով՝ բանավոր ավանդությունն իր մեջ է խտացնում պատմական, սոցիալական, էթնիկամշակութային տարբեր շերտեր ու հիշատակներ, որոնց մասնագիտական հատուկ քննությունների հիման վրա կատարած վերակազմությունները ունեն գիտական բացառիկ արժեք, հատկապես նախապատմական և վաղ պատմական անգիր դարաշրջանների պատմությունն ու մշակույթը լուսաբանելու առումով:

5. Այս տեսակետից հայ բանահյուսությունը, իբրև ցարդ գոյատևող հինավուրց ժողովուրդներից մեկի հոգևոր մշակույթի բանաստեղծական համակարգ, մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն հայոց, այլև հնդեվրոպական ցեղակից ժողովուրդների ավանդության համակարգում, որպես նախնական ցեղային ընդհանրությունից սերող

մտածողությանն ու երևակայությունը: Բանահյուսության մեջ այդ կաղապարներով է վերաձևվում իրականությունը, դառնում բանաստեղծական որոշակի կառույց, որն արտահայտվում է ամբողջական ու ավարտուն բանահյուսական բնագրի տեսքով, լինի այն ընդարձակ վիպասանություն, հեքիաթ, զրույց, երգ, թե սեղմ ու հակիրճ բանաձև՝ հանելուկ, առած և այլն:

Բանահյուսական բնագրերը, թեպետ նարափոփոխ, այնուամենայնիվ հարաբերականորեն կայուն ու ամբողջական միավորներ են, որոնք գեղարվեստական այուժեների, մոտիվների, կերպարների միջոցով, կենդանի ու պատկերավոր խոսքով վերարտադրում են տարբեր պատմաշրջանների էթնիկամշակութային շատ իրողություններ:

2. Ի տարբերություն գեղարվեստական գրականության, որի հիմնական նպատակը ընթերցող լայն խավերի գեղագիտական կարիքների բավարարումն է, բանահյուսությունը և, առանձնապես նրա որոշ տեսակներ (հեքիաթ, ժող. վեպ, զրույց, երգ), նման նպատակները հետապնդելով հանդերձ, ունի նաև կիրառական լայն գործառնություններ, սերտորեն առնչվում է ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի տարբեր ոլորտների հետ, ստանձնում է գործառնական ակտիվ դեր և գեղարվեստական խոսքով ու մտածողությամբ իր մեջ արտացոլում կյանքի ու մշակույթի այդ տարբեր բնագավառներին աղերսվող ժողովրդական ըմբռնումները, մտորումները, հավատալիքներն ու պատկերացումները, իղձերն ու ձգտումները:

ա/ Բանավոր ավանդության ամենավաղ կիրառական ֆունկցիան թերևս նրա ծիսահմայական գործառույթն է՝ կապված ամենից առաջ մարդկային խոսքի հմայական զորության հավատալիքի հետ: Դա, այսպես կոչված, խոսքային հմայությունն է (վերբալիս մագիա), որն արտահայտվում է հմայական հատուկ բանաձևերով (անեծք, օրհնանք, երդում, աղոթք, հրաման, սպառնալիք) և կիրառվում է տարբեր հմայագործական արարողություններում (բժշկություն, կախարդանք), իսկ ծիսական տարբեր երգերի ու բարեմաղթության բանաձևերի ծիսաթատերգական բնագրերի զուգակցմամբ՝ ծիսատոնական տարբեր արարողություններում (ծնունդ, հարսանիք, մահ, հասարակական, կրոնական զանազան տոներ ու առնախմբություններ):

բ/ Հաջորդ կիրառական ֆունկցիան, որ դարձյալ հենված է բանաձևված խոսքի հմայական ներգործության հավատալիքի վրա, բանահյուսական որոշակի ժանրերի (անեծք, օրհնանք, երդում) իրավաբանական գործառույթն է: Վաղ պատմական, միջնադարյան, նոր շրջանի գրավոր ու բանավոր վկայություններով՝ անեծքը և օրհնանքը, ինչպես նաև երդումը, իբրև պատժի և խրախուսանքի իրավաբանական սանկցիաներ, լայնորեն կիրառվել են նյութական հուշարձանների, մշակութային արժեքների պահպանության, խնամքի, անձեռնմխելիության, աշխարհիկ ու հոգևոր հանձնառությունների, պետական ու անհատական պայմանագրերի, առքի և վաճառքի գործարքների անկասելիությունը ապահովելու նպատակով:

գ/ Բանահյուսության գործառնական մյուս կարևոր կիրառությունը, որ հետապնդում է տնտեսական-գեղագիտական, նաև գործնական նպատակներ, աշխատանքի տարբեր ոլորտների հետ նրա սերտ առնչումն է: Այն դրսևորվում է գերազանցապես աշխատանքային երգերով, որոնք բնիկաորեն կապված լինելով մարդու գործունեության աշխատանքային ռիթմին, աշխատանքով նյութական բարիքներ ապահովելու նրա հոգեկան ակնկալիքներին, պարզապես ուղեկցում են աշխատանքի բոլոր ձևերին ու տեսակներին, հոգեբանորեն թեթևացնում դրանք և իրենց բովանդակությամբ արտահայտում մարդու վերաբերմունքը աշխատանքի միջոցների, ակնկալվող արդյունքների և իր հասարակական վիճակի նկատմամբ:

դ/ Ի վերջո, բանավոր ավանդության կիրառական հաջորդ բնագավառը լեզվական գործառնությունների ոլորտն է: Բանահյուսությունն առհասարակ լինելով գեղարվեստական մտածողության լեզվական դրսևորման երևույթ, նրա առանձին սեղմ ու հակիրճ տեսակները՝ (առած-ասացվածքներ, ոճական կաղապարված դարձվածներ, հիշոց-հայհոյանքներ, սպառնալիքներ, փաղաքշական խոսքեր և այլն), ունենալով հանդերձ բանահյուսական նկարագիր ու ժանրային հատկանիշներ, իրենց սովորական կիրառությամբ անբաժան են կենդանի խոսակցական (նաև գրական) լեզվից և լայնորեն օգտագործվում են առօրյա

խոսքում, իբրև լեզվական պատկերավորման սովորական միջոցները՝ խոսքը դարձնելով առավել կենդանի, սեղմ ու իմաստալից:

3. Բանավոր ավանդությունը խոսքի արվեստ լինելով հանդերձ, միաժամանակ սինկրետիկ-համադրական արվեստ է: Այն թե՛ իր ծագումնաբանությամբ և թե՛ հետագա պատմահասարակական զարգացման ընթացքում համադրվել ու համատեղվել է էթնիկական մշակույթի, մասնավորապես արվեստի տարբեր ձևերի հետ (վոկալ-երաժշտական, պարային, թատերական), կենցաղավարել և կատարվել է այդ ձևերի մասնակցության համադրությամբ:

Երգերն, օրինակ, հորինվել և կատարվել են պարտադիր երաժշտական եղանակով (մեղեդի), ուղեկցվել երաժշտական որոշակի գործիքների նվագակցությամբ, հաճախ էլ՝ պարերով (պարերգային բանահյուսություն):

Պաշտամունքային առասպելները ծիսայնացվել, թատերայնացվել, ներկայացվել են կրոնածիսական արարողություններով, դրամատուրգիական որոշակի ձևերով, պատմողը ուղեկցվել երգային մեղեդիներով, երաժշտությամբ, պարերով:

Վեպերն (էպոս) ու վիպերգերը՝ հորինված լինելով չափածո կամ չափածո ու արձակ մասերի համադրությամբ և՛ երգվել են, և՛ երգվել են ու վիպվել միաժամանակ, ուղեկցվել երաժշտական որևէ լարային գործիքի նվագակցությամբ, ինչպես նաև՝ պարային ռիթմիկ շարժումներով, դիմախաղերով, ձայնային համապատասխան ելևէջներով:

Բանահյուսական բոլոր այն ստեղծագործությունները առհասարակ, որոնք օժտված են ռիթմիկ տաղաչափությամբ, քնարական կամ դրամատուրգիական տարրերով կամ էլ էթնիկական մշակույթի տարբեր բնագավառներում ունեցել են ֆունկցիոնալ կիրառություն, միշտ էլ հանդես են եկել արվեստի տարբեր ձևերի համադրությամբ: Սինկրետիզմը բանավոր ավանդության տարբերքն է:

4. Բանավոր ավանդությունը մարդկության պատմության վաղ արշալույսից ի վեր, տարբեր ձևերով, լայն արտացոլումներ է գտել մշակութային տարբեր հուշարձաններում՝ սկսած քարանձավային պատկերագրությունից, ժայռապատկերներից, վերջացրած վաղ և դասական շրջանի մոնումենտալ քանդակագործությամբ, զարդարվեստով, գրի ու գրչության տարբեր ձևերով ավանդված գրավոր հուշարձաններով: Կերպարվեստի տարբեր ձևերում անդրադարձվել են հին առասպելաբանական մոտիվներ, ըմբռնումներ, պատկերացումներ, կերպարներ, անգամ սյուժեներ կամ սյուժետային տարրեր: Դրանց շնորհիվ հնագույն կերպարվեստի (քանդակներ, քանդակազարդ պատկերներ, հնագիտական իրերի զարդանախշեր և այլն) շատ նմուշների իմաստաբանությունը, որ հաճախ մնում է առեղծվածային, հնարավոր է բացահայտել ու վերականգնել բանավոր ավանդության խորքերում պահպանված, նաև հենց գրավոր ավանդված առասպելական զրույցների, երգերի, հավատալիքների, պատկերացումների միջոցով:

Իսկ հին գրավոր հուշարձաններով մեզ հասած ամբողջական առասպելները, վեպերը, հեքիաթները, զրույցները, երգերը, որոնց զուգահեռ տարբերակները շարունակում են գոյատևել արդի բանավոր ավանդության մեջ, վկայում են բանահյուսության խոր վաղնջականությունն ու ավանդականությունը:

Իր այս բազմագործառույթ լայն կիրառությունների, հասարակական տարբեր խմբերի, նրանց նյութական և հոգևոր կյանքի, մշակույթի տարբեր բնագավառների հետ ունեցած սերտ առնչությունների, խոր ավանդականության, տարբեր դարաշրջաններում կրած նորայնացման և փոխաձևումների հետևանքով՝ բանավոր ավանդությունն իր մեջ է խտացնում պատմական, սոցիալական, էթնիկամշակութային տարբեր շերտեր ու հիշատակներ, որոնց մասնագիտական հատուկ քննությունների հիման վրա կատարած վերակազմությունները ունեն գիտական բացառիկ արժեք, հատկապես նախապատմական և վաղ պատմական անգիր դարաշրջանների պատմությունն ու մշակույթը լուսաբանելու առումով:

5. Այս տեսակետից հայ բանահյուսությունը, իբրև ցարդ գոյատևող հինավուրց ժողովուրդներից մեկի հոգևոր մշակույթի բանաստեղծական համակարգ, մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն հայոց, այլև հնդեվրոպական ցեղակից ժողովուրդների ավանդության համակարգում, որպես նախնական ցեղային ընդհանրությունից սերող

ազգային ժառանգություն:

Հայ հին վիպական ավանդության, մասնավորապես առասպելների, հեքիաթների, վեպերի, երգերի, հանելուկների, ինչպես նաև ծիսահմայական բանաձևերի մեջ պահպանվել են հնդեվրոպական ընդհանրությունից եկող առասպելաբանական մի շարք սյուժեներ (ամպրոպային վիշապամարտի, սրբազան երկվորյակների (աստեղային ու արևային), Աշխարհի երկմաս ու եռամաս կառուցվածքի, ատրվածային սուրբ երրորդության, սրբազան բույսերի, կենդանիների (ձուկ, գայլ, շուն, եզ, ձի), թռչունների (արագիլ, արծիվ, ծիծեռնակ, ագռավ, աքաղաղ) վերաբերյալ առասպելական պատկերացումներ, հավատալիքներ, բանաստեղծական-ատդասչական որոշակի ձևեր ու հնարանքներ: Հայ բանավոր ավանդությունը միաժամանակ իր մեջ է ներառել հին առաջավոր-ասիական ցեղերի ու քաղաքակրթությունների մշակույթին բնորոշ վիպաառասպելական սյուժեներ, մոտիվներ, կերպարներ, կրոնական հավատալիքներ ու պատկերացումներ, չխոսելով այլևս Արևելքի հին ու միջնադարյան ժողովուրդների բանահյուսության թողած ազդեցությունների մասին: Հայոց հին ու միջնադարյան պատմության նշանավոր անցուդարձերը գեղարվեստական լայն արձագանքներ են գտել հայ հին ավանդական վեպերում, վիպերգերում, պատմական զրույցներում, ընդ որում՝ հնից նորը եկող հերթագայությամբ: Ամենավաղ պատմական հիշատակները պահպանվել են Արամի և Արա Գեղեցկի պատմականացած առասպելներում և վերաբերում են ուրարտաասորեստանյան և ուրարտամարական հարաբերություններին: Հայ-մարականը (մ.թ.ա. 6-1-ին դ.դ.)՝ «Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ» միջնադարյան վեպերում, հայ-արաբականը (7-13-րդ դ.դ.)՝ «Սասնա ծռեր» հերոսավեպում և զանազան ավանդազրույցներում: Ռուս ուշ միջնադարի և նոր շրջանի պատմական անցուդարձերն անդրադարձվել են հայ անվանի գործիչներին ու քաջորդիներին նվիրված վիպասքերում, հերոսական վիպերգերում ու բալլադներում:

Այլ կերպ ասած՝ բանավոր ավանդությունը հայ ժողովրդի պատմական ողջ գոյընթացում ակտիվորեն արձագանքել է գրեթե բոլոր նշանավոր իրադարձություններին՝ սկսած Հայկ Նահապետի ազգածագման առասպելական վիպասքից, վերջացրած 19-20-րդ դարերում և անգամ մեր օրերն ընդգրկող թուրք բռնակալների դեմ մղած ազատագրական հերոսամարտերին ու անվանի հերոսներին նվիրված երգերով ու զրույցներով:

6. Հայ (և ոչ միայն հայ) բանավոր ավանդությունն անսպառ աղբյուր է հանդիսանում ժողովրդի սոցիալ-անահսական կյանքի, կենցաղի, բարքերի, հոգեբանության, ազգային-հասարակական ձգտումների ողջ համայնապատկերը ճանաչելու, ըմբռնելու և հետազոտելու տեսակետից:

Այն թանկարժեք տվյալներ է պարունակում տարբեր դաքաշրջանների անտեսական կացութաձևերի, սոցիալ-կենցաղային, դասային ու դասակարգային հարաբերությունների, բարքերի ու սովորույթների (երաշխայառում և իրապատում հեքիաթներ, միջնադարյան առակներ ու ժամանակակից անեկդոտներ, հայրեններ, խաղիկներ, տարբեր երգատեսակներ, առած-ասացվածքներ) վերաբերյալ:

Ավանդական բանահյուսությունն առհասարակ, ամբողջությամբ վերառած, շնչում է ժողովրդական դարավոր կենսափորձից արտածված իմաստնությամբ, լավատեսությամբ, զվարթ ու կենսախինդ հումորով, հոռի երևույթների նկատմամբ երգիծական առողջ վերաբերմունքով, գալիքի նկատմամբ պայծառ հավատով:

Մի խոսքով՝ բանահյուսությունը ժողովրդի հոգուց ու հավատից բխած մտքերի, պատկերացումների, իդեերի ու երազանքների մի ամբողջական համակարգ է, հոգևոր մշակույթի մի վիթխարի բնագավառ, որի անսպառ ավյալները պատմամշակութային մեծագույն արժեք են ներկայացնում հայ ժողովրդի բազմադարյա նյութական ու հոգևոր կյանքի համակողմանի հետազոտության համար:

7. Հայ բանավոր ավանդությունը, նյութերի գրառման ու դրանց գրական վերամշակման վաղեմության առումով, թեպետ զիջում է հին հնդկական, իրանական, հունական ու հռոմեական ավանդություններին, բայց վաղնջական խորքով, մշակութաբանական արժեքով պատվավոր տեղ ունի դրանց շարքում: Նախ, հարկ է նշել, որ հայերին ու Հայաստանին վերաբերող պատմական ավանդազրույցները մինչև գրերի գյուտը, գրառվել ու պահպանվել են այլալեզու գրավոր աղբյուրներում (Մար Աբաս Կատինա): Իսկ հայ գրականության

սկզբնավորման վաղ այգաբացին դրանք գրառվում են, վերամշակվում, օգտագործվում, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Եզնիկի կողմից իբրև պատմական ու բանահյուսական սկզբնաղբյուրներ:

Այդպես, հայ գրականության սկզբնավորումից ի վեր, առընթեր ընթացքներով, հայ բանավոր ավանդության նմուշները գրանցվում, գրով ամրակայվում են հայոց լեզվի պատմականորեն վկայված բոլոր ձևերով՝ հին հայերեն իր երկու տարբերակներով՝ ժողովրդական կամ վրպասանական հայերեն և գրաբար, միջին հայերենով, նոր հայերեն իր զույգ՝ աքենլահայ ու արևմտահայ տարբերակներով, շուրջ 60-ի հասնող բարբառներով ու խոսվածքներով: Հայ բանավոր ավանդությունը սոսկ լեզվական առումով, դա մի վիթխարի ժառանգություն է, որ տարբեր պատմաշրջանների հայերենը, այն էլ ժողովրդական բանաառեղծական լեզվի հարուստ ձևերով ու դրսևորվածներով իր մեջ է պահպանել:

Ինչպես աշխարհի շատ հին ժողովուրդների գրականությունները ծագել ու զարգացել են սեփական բանավոր ավանդության հիմքերի վրա, այնպես էլ հայ հին գրականությունը: Թեպետ վերջինս սկզբնավորվեց առաջին հերթին ազգային եկեղեցաքաղաքական շահագրգռություններով, սակայն 5-րդ դարի դասական պատմագրությունը հանձին Ագաթանգեղոսի, Փ. Բուզանդի, մասամբ և Մ. Խորենացու երկերի, հիմնականում ձևավորվեց հայ վիպական բանավոր ավանդության հիմքի վրա: Դրա շնորհիվ են պահպանվել ու այսօր մեզ հասել հայոց նախապատմական շրջանի դյուցազնական-դիցաբանական առասպելները նախահայր Հայկի, Աքամի, Արա Գեղեցկի, Տորքի, Վահագնի մասին, վիպական այնպիսի հինավուրց հուշարձաններ, ինչպիսիք են «Վիպասանք» առասպելաբանական վիպաշարը, «Պարսից պատերազմ», հետագայում նաև «Տարոնի պատերազմ» ավանդական վեպերը:

Հայ գրականության ոչ միայն ծագման, այլև հետագա զարգացման ընթացքի վրա ևս մեծ ներգործություն է ունենում բանավոր ավանդությունը: Նախ՝ հայոց սրբախոսական գրականությունը՝ քրիստոնյա սրբերի ու նահատակների վարքաբանական ու վկայաբանական զրույցներով, զգալի ազդեցություն է կրել բանավոր ավանդությունից: Ապա՝ 10-րդ դարից ի վեր, երբ կյանքի ու աշխարհայացքի փոփոխության հետևանքով սկսվում է հայ հին գրականության աշխարհականացումը, գրականություն են ներթափանցում բանահյուսական մի քանի ժանրեր՝ բացահայտ ժողովրդական լեզվով ու մտածողությամբ (առակ, հանելուկ, սեր, սիրո, ուրախության հայրեններ), որոնք ենով ու բովանդակությամբ մեծ ներգործություն են ունենում հայ առակագրության, հանելուկագրության, սիրային ու խոհափիլիսոփայական տաղերգության զարգացման վրա: Բանավոր ավանդությունից կատարված անմիջական գրառումներով ժողովրդական սիրո և ուրախության հայրենները մանում են տաղարանները, առակներն ու աշխարհիկ հոգեշահ զրույցները՝ Վարդանի անունով հայտնի ժողովածուները և մեծապես նպաստում գրականության աշխարհականացմանը:

Բացառիկ նշանակալից է հայ նոր գրականության սկզբնավորման և զարգացման վրա բանավոր ավանդության ազդեցությունը՝ թե ժողովրդական լեզվով, մտածողությամբ և թե բանահյուսական երկերի գրական վերամշակումներով, սկսած Աբովյանից ու Պռոշյանից, վերջացրած մերօրյա բանաստեղծներով ու գրողներով (Հ. Շիրազ և ուրիշներ):

Այսպիսին են, ընդհանուր առմամբ, բանահյուսության նկարագիրն ու հատկանիշները և դրանցով պայմանավորված այն բարդ ու բազմազան կապերն ու առնչությունները ժողովրդի պատմության, կյանքի, մշակույթի տարբեր կողմերի ու երևույթների հետ, որ իր պատմական զարգացման դարավոր հոլովույթի ընթացքում ձեռք է բերել բանավոր ավանդությունը և դարձել մեծագույն ներդրում ժողովրդական մշակույթի ժառանգության մեջ:

# МЕСТО И ЗНАЧИМОСТЬ ФОЛЬКЛОРА В СИСТЕМЕ НАЦИОНАЛЬНОЙ КУЛЬТУРЫ

**РЕЗЮМЕ**

**С. АРУТЮНЯН.**

*В статье рассматриваются теоретические вопросы фольклора, как единой системы эпических, лирических и романтических устных произведений, которые, независимо от жанровых особенностей, сохранили социально-исторические и культурные реалии разных эпох. Фольклор, как продукт художественного мышления народа, один из важнейших компонентов этнической культуры. Он в течение историко-типологического развития, приобретая синкретический характер, сопоставлялся с другими видами народного искусства.*

*Армянский фольклор, как один из древнейших в мире, занимает свое достойное место и представляет особую ценность в системе словесного искусства индоевропейских народов. В его древнейших пластах проецируются не только общеиндоевропейские мифологические мотивы и обряды, но и стихотворные метрические особенности поэтической речи. С лингвистической точки зрения - это богатейшее наследие. В разных исторических периодах письменно зафиксированные фольклорные произведения демонстрируют богатство и уровень развития не только народнопоэтического /около 60 диалектов/, но и литературного языка данного времени.*

*В армянском фольклоре свое отражение нашли значительные события истории нашего народа и народов Древнего Востока. В эпических произведениях, легендах и народных сказах кристаллизировались идеалы и чаяния армянского народа, восхвалялись герои, борющиеся за свободу и независимость. Фольклер сыграл неоцениную роль в процессе формирования новой армянской литературы и литературного языка.*